ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/60»

ք. Երևան «27» 06 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Մ. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սոցիալ-մշակութային ինովացիաների լաբորատորիա» (ՍՄԻԼ) բարեգործական հիմնադրամը, ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Դ. Աբգարյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրականության հրատարակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Պահանջել կատարելու մակետի հաստատման փուլում որոշակի հիմնավորված փոփոխություններ ձևավորման աշխատանքում.

բ) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

գ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Գրքի հանրայնացմանն ուղղված բոլոր միջոցառումներում. (շնորհանդես, հոբելյանական երեկո, մամուլի ասուլիս, մամուլի հաղորդագրություն և այլն) պարտադիր հրապարակել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորված լինելու և պետական պատվերով հրատարակված լինելու հանգամանքը:

2.4.3. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին հաջորդող 3 տարիների ընթացքում պատվիրատուի կողմից հավելյալ տպագրություն պատվիրելու դեպքում այն իրականացնել միայն տպագրական աշխատանքի համար պահանջվող արժեքով՝ բացառելով հրատարակչական մասը:

2.4.4 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը կամ դրա մի մասը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը 2 օրինակ (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.1.1 Աշխատանքի փուլը (մակետի հանձնում) Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում՝ Պատվիրատուին ուղարկելով հրատարակության մակետը (ները), կատարված Աշխատանքի փուլի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3) և Աշխատանքի փուլի արդյունքը Պատվիրատուին հանձնելու-փաստը ֆիքսող փաստաթուղթը 2 օրինակ (Հավելված N 3.1):

3.1.2 Աշխատանքն ամբողջությամբ Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված վերջին ժամկետում՝ Պատվիրատուին ներկայացնելով տպագրված հրատարակության օրինակը (ները), կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը 2 օրինակ (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում

պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից Աշխատանքի նմուշը ընդունվելու դեպքում Կատարողը իր միջոցներով 10 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքն ամբողջությամբ տեղափոխում և հանձնման-ընդունման արձանագրությամբ փոխանցում է «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին: «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից ստորագրված հանձնման-արձանագրությունը ստանալուց հետո Պատվիրատուի ներկայացուցիչը 5 աշխատանքային օվա ընթացքում կնքում և Կատարողին է փոխանցում Աշխատանքի հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու դեպքում՝ պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնի 60%-ը՝ 330 000 (երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի տրամադրումն իրականացվում է աշխատանքի փուլի (մակետի հանձնում) հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենքով սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, դաշնական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական

հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2, հեռ.՝, 010 58-51-78, 011 585178 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Սքցիալ-մշակութային ինովացիաների լաբորատորիա» (ՍՄԻԼ) բարեգործական հիմնադրամ Հասցե՝ Երևան, Կոմիտաս պող. 60, թիվ 3, Հեռ. +374 (95) 55 91 56 ՀՎՀՀ 00109799, հ/հ 220453350021000 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Ս. Մուրադյան (անուն, ազգանուն) (ստորագրություն) Կ.Տ.	Դ. Աբգարյան (անուն, ազգանուն) (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1
«27» 06 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/60» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման		
							հասցեն	ժամկետը*	
								Աշխատանքի փուլի	Աշխատանքն ամբողջությամբ
1	79971100-3	**1. Աշխատանքի անվանումը՝** Հորայր Խաչատրյան «Երկեր» էլեկտրոնային գրքի հրատարակման աշխատանքների ծեռքբերում **2. Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը** Գիրքը նախատեսված է էլեկտրոնային ընթերցիչների համար: Ներառված են «Որոնող էիր Մարդ Աստծո» վեպը և պատմվածքներ: **3. Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Ծավալը՝ 20 մամուլ (576.000 նիշ) (առնվազն) Տպաքանակը՝ 1 էլ. սկավառակ **3.2 Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 10-12 Միջտողային հեռավորությունը՝ 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ Arian grqi Էլեկտրոնային տեսակները ePub 3, kindle mobi (KF7) **4. Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա** Հրատարակության 1 մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը** 5.1 Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 20.0 մամուլ: 5.2 Հրատարակության անորակությունները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:	դրամ	250000	250000	1	Ք. Երևան, Տերյան 72	25.09.2018թ	20.11.2018թ.
2	79971100-3	**1. Աշխատանքի անվանումը՝**	դրամ	300000	300000	1	Ք. Երևան, Տերյան 72	25.09.2018թ	20.11.2018թ.

		Հովհաննես Թումանյան «Երկեր» էլեկտրոնային գրքի հրատարակման աշխատանքների ծեռքբերում **2. Պետող աշխատանքի էության համառոտ շարադրանքը** Գիրքը նախատեսված է էլեկտրոնային ընթերցիչների համար: Ներառված են հրապարակախոսական և քննադատական հոդվածները: **3. Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Ծավալը՝ 20 մամուլ (576.000 նիշ) (առնվազն) Տպաքանակը՝ 1 էլ. սկավառակ **3.2 Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 10-12 Միջտողային հեռավորությունը՝ 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ Arian grqi Էլեկտրոնային տեսակները՝ pab 3, kindle mobi (KF7) **4. Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա** Հրատարակության 1 մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հատուկ նկարագրությունը** 5.1 Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 20.0 մամուլ: 5.2 Հրատարակության անորակությունները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:							

* *աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 կառավարական տուն 2,
հեռ.՝, 010 58-51-78, 011 585178
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Ա. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սոցիալ-մշակութային ինովացիաների լաբորատորիա» (ՍՄԻԼ) բարեգործական հիմնադրամ
Հասցե՝ Երևան, Կոմիտաս պող. 60, թիվ 3,
հեռ. +374 (95) 55 91 56
ՀՎՀՀ 00109799, հ/հ 20453350021000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

Դ. Աբգարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2

«27» 06 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/60» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79971100-3	Ջորայր Խալաթիյան «Երկեր»	0	0	0	0	0	0	0	0	150000	150000	250000	250000	**250000**
2	79971100-3	Հովհաննես Թումանյան «Երկեր»	0	0	0	0	0	0	0	0	180000	180000	300000	300000	**300000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝, 010 58-51-78, 011 585178
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործադրական վարչությունում

Մ. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սոցիալ-մշակութային ինովացիաների լաբորատորիա» (ՍՄԻԼ) բարեգործական հիմնադրամ
Հասցե՝ Երևան, Կոմիտաս պող. 60, թիվ 3,
հեռ. +374 (95) 55 91 56
ՀՎՀՀ 00109799, հ/հ 220453350021000
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

Դ. Արզարյան
(ստորագրություն)

«ՍՄԻԼ» ԲԿ
"SKIL" CHF
00109799

Հավելված թիվ 3

« 27 » 06 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/60» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	**Պատվիրատու**
«Սոցիալ-մշակութային ինովացիաների լաբորատորիա» (ՍՄԻԼ) բարձրագրական հիմնադրամ	ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցե՝ Երևան, Կոմիտաս պող. 60, թիվ 3,	Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ. +374 (95) 55 91 56	հեռ.՝, 010 58-51-78, 011 585178
ՀՎՀՀ 00109799, հ/հ 220453350021000	ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 3.

« 27 » 06 2018 թ. կնքվա

«ՀՀՄՆ-ՄՄԱՇՁԲ-18/60» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան
20.06.2018թ.

«Սոցիալ-մշակութային իննովացիաների լաբորատորիա (ՍՄԻԼ)» բարեգործական հիմնադրամը, այսուհետև՝ Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս տնօրեն Դավիթ Աբգարյանի, մի կողմից, և Մարատ Յավրումյանը, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը Պատվիրատուին է տրամադրում Հովհաննես Թումանյանի «Երկեր»: [հրապարակախոսական, քննադատական հոդվածներ, ծավալը՝ առնվազն 576.000 նիշ, eISBN 978-9939-9161-9-4], և Զորայր Խալափյանի «Երկեր»: [Որտե՞ղ էիր, մարդ աստծո... / վեպ, պատմվածքներ, ծավալը՝ առնվազն 576.000 նիշ, eISBN 978-9939-9161-8-7] ժողովածուների էլ. հրատարակության իրավունքները:

1.2. Ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր եղանակի համար հեղինակային իրավունքի իրավատիրոջ (Պատվիրատուի) թույլտվությունը պարտադիր է:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Պատվիրատուն պարտավոր է.

2.1.1. Կատարողին, որպես հոնորար, վճարել 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ, եթե այլ պայմաններ նախատեսված չեն կողմերի միջև:

2.1.2. Գրքերը հրատարակել էլ. գրքերի՝ epub3, mobi (KF7) ձևաչափերով (1-ական սկավառակ):

2.1.3. Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ մտցնել բնագրում:

2.1.4. Ապահովում է էլ. գրքերի հրատարակչական որակյալ լույս ընծայումը:

2.1.5. Կատարողը պարտավոր է.

2.1.6. Բնագիրը Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով), պայմանագրի կնքման պահից քառամսյա ժամկետում:

3. Այլ պայմաններ

3.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի լույս ընծայման պահը:

3.2.Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Սոցիալ-մշակութային իննովացիաների լաբորատորիա (ՍՄԻԼ)» բարեգործական հիմնադրամ
Երևան [illegible], 50, բնակ 3, ՀՎՀՀ 00109799

Տնօրեն՝ Դ. Աբգարյան

կ.տ.

ԿԱՏԱՐՈՂ
Մարատ Յավրումյան
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Աշոցք, 1 թղմ., 1 փ., 2 անց., տ. 2
Անձնագիր՝ AK0508376, տրված՝ 20.05.2010թ., ՕՄԻ-ի կողմ.

(ստորագրություն)